# ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԾԱՆՈՒՑՈՒՄ

## Հայտեր ներկայացնելու հրավեր (ՀՆՀ)

**Փոքր ծավալի աշխատանքների գնում**
**(Մեկ ծրարով մրցութային գործընթաց)**

**Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն**

**Ծրագրի անվանումը՝ «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում»**
**Պայմանագրի անվանումը՝ «Վայոց ձորի մարզային հիվանդանոցի կառուցման շինարարական աշխատանքներ»**
**Ծրագիր No.: P175023**
**ՀՆՀ No.՝ CR5/AF/RFB/B-W/001-21**

1. Հայաստանի Հանրապետությունը դիմել է Համաշխարհային բանկին՝ **«Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» ծրագրի** ծախսերը հոգալու համար և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել **«Վայոց ձորի մարզային հիվանդանոցի կառուցման շինարարական աշխատանքներ»** պայմանագրի շրջանակներում վճարումներ իրականացնելու համար: Այս պայմանագրի վճարումներն իրականացվելու են Համաշխարհային բանկի և ՀՀ կառավարության համատեղ ֆինանսավորմամբ: Մրցութային գործընթացը ղեկավարվելու է Համաշխարհային Բանկի գնումների կանոնակարգերով:

2. Սույնով **ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ**-ն հրավիրում է իրավասու Հայտատուներին ներկայացնել հայտեր «**Վայոց ձորի մարզային հիվանդանոցի կառուցման շինարարական աշխատանքների համար»**:

   Աշխատանքների շրջանակն է՝ **Նախատեսվում է կառուցել ՀՀ Վայոց Ձորի մարզի նոր բժշկական կենտրոն շուրջ 3800քմ մակերեսով, մեկ հարկանի, նկուղով, բաղկացած հինգ մասնաշենքից, տանիքում ուղղաթիռի հարթակով, ինչպես նաև բժշկական հաստատության համար կաթսայատուն և ենթակայան: Նախատեսվում է նաև արտաքին ինժեներական ցանցերի և կառույցների համակարգերի ներդրման, ներքին իժեներական ենթակառուցվածքների մոնտաժման և տարածքի բարեկարգման աշխատանքներ:**

   Աշխատանքների նախատեսված ավարտման ժամկետն է՝ 24 (քսանչորս) ամիս:

**<u>Որակավորման չափանիշները ներառում են (սակայն չեն սահմանափակվում*).</u>**

(i) Հայտատուն պետք է ցույց տա, որ ունի հասանելի կամ առկա իրացվելի ակտիվներ, չգրավադրված անշարժ գույք, վարկային գծեր և այլ ֆինանսական միջոցներ (բացի որևէ պայմանագրային կանխավճարից), որոնք բավարար են շինարարության ժամանակ դրամական միջոցների հոսքի կարիքները բավարարելու համար, որոնք՝ տվյալ պայմանագրի համար կազմում են **255,500,000 ՀՀ դրամ՝** հանած Հայտատուի պարտավորությունները այլ պայմանագրերի գծով:

(ii) Նվազագույն միջին տարեկան շրջանառությունը շինարարության գծով պետք է կազմի **2,044,000,000 ՀՀ դրամ** հաշվարկած որպես վերջին **5 (հինգ) տարիների (2016-2020թթ)** ընթացքում շարունակվող և/կամ ավարտված պայմանագրերով ստացված վճարումների վկայագրերի ընդհանուր գումար՝ բաժանած **5 (հինգ)** տարիների վրա:

(iii) Շինարարական պայմանագրերի առնվազն **6 (վեց) տարվա** փորձ՝ որպես գլխավոր կապալառու, ՀՁ անդամ, ենթակապալառու կամ կառավարման կապալառու, սկսած **2015թ հունվարի 1-ից**:

(iv) **2015թ. հունվարի 1-ից** մինչև հայտի ներկայացման վերջնաժամկետն ընկած ժամանակահատվածում նվազագույն թվով ստորև սահմանված համանման պայմանագրեր (համանման է համարվում **հասարակական և բնակելի շինությունների կառուցման բնագավառը**), որոնք Հայտատուն գոհացուցիչ և էապես ավարտել է որպես գլխավոր կապալառու, ՀՁ անդամ, կառավարման կապալառու կամ ենթակապալառու.

- 1 (մեկ) պայմանագիր առնվազն՝ 1,635,000,000 ՀՀ դրամ արժեքով, կամ
- 2 (երկու) պայմանագիր յուրաքանչյուրն առնվազն՝ 817,500,000 ՀՀ դրամ արժեքով

(v) **2015 թվականի հունվարի 1-ից** մինչև մրցութային առաջարկների ներկայացման վերջնաժամկետն ընկած ժամանակահատվածում վերոնշյալ և ցանկացած այլ պայմանագրերում (էապես ավարտված կամ իրականացման ընթացքում գտնվող) որպես գլխավոր կապալառուի, ՀԳ-ի անդամի կամ ենթակապալառուի նվազագույն շինարարական փորձ հետևյալ հաջող ավարտված հիմնական աշխատանքներում.

- Օդափոխության մեխանիկական դրդմամբ ներմուծման-արտածման օդի լավորակման և սառնամատակարարման համակարգերի տեղադրում, առնվազն 1500 քմ շինության համար, և
- Հրդեհային ազդարարման ավտոմատ համակարգերի տեղադրում:

*Պահանջվող հիմնական աշխատանքների ծավալը կարող է ցույց տրվել մեկ կամ մի քանի պայմանագրեր միավորելու միջոցով (առավելագույնը երեք), եթե դրանք իրականացվել են վերոնշյալ ժամանակահատվածի ընթացքում:*

(vi) **2015թ հունվարի 1-ից** մինչև Հայտերի ներկայացման վերջնաժամկետը վերոնշյալ (iv) կետում նշված և/կամ ցանկացած այլ պայմանագրերում (էապես ավարտված կամ իրականացման ընթացքում գտնվող) որպես Գլխավոր կապալառու, ՀՁ անդամ կամ ենթակապալառու, բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների կառավարման փորձ հետևյալ ասպեկտներում. Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանների իրականացում հասարակական և բնակելի շինությունների կառուցման և/կամ վերակառուցման բնագավառում:

*(*)Մանրամասն տեղեկություններ որակավորման պահանջների վերաբերյալ ներկայացված են Հայտեր ներկայացնելու հրավերում (Բաժին III. Գնահատման և որակավորման չափանիշներ):*

3. Մրցույթը կիրականացվի **Ազգային բաց մրցույթ** ընթացակարգով՝ օգտագործելով «Հայտեր ներկայացնելու հրավերը» (ՀՆՀ), որը սահմանվել է Համաշխարհային բանկի **«Համաշխարհային Բանկի գնումների կանոնակարգեր ՆԾՖ**

**փոխառուների համար/ «World Bank Procurement Regulations for IPF Borrowers» [հուլիս 2016թ., վերանայված նոյեմբեր 2017 և օգոստոս 2018]** փաստաթղթով («Գնումների կանոնակարգեր»): Մրցույթը բաց է բոլոր Հայտատուների համար՝ Գնումների կանոնակարգերում սահմանված ձևով:

4. Հետաքրքրված իրավասու Հայտատուները կարող են ամբողջական մրցութային փաթեթը/փաստաթղթերը **հայերեն լեզվով** ներբեռնել www.armeps.am; կամ www.gnumer.am (տես՝ «Գնումների հայտարարություններ»→«Ծրագրի իրականացման գրասենյակների կողմից կատարվող գնումների մասին հայտարարություններ և հրավերներ» բաժինը) կայքերից: Էլ.գնումների համակարգում գրանցված Հայտատուներն ավտոմատ կերպով կստանան սույն հրավերը՝ կցված Մրցութային փաստաթղթերի հետ միասին /համաձայն համապատասխան ԳԸԲ (CPV) կոդերի/: Ցանկացած կազմակերպություն կարող է գրանցվել էլ.գնումների համակարգում: Հայտը պետք է ներկայացնի **«ARMEPS» համակարգի միջոցով** (www.armeps.am):

   Հայտնում ենք, որ ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն պատասխանատվություն չի կրում հայտատուի կողմից վերոնշյալ կայքերից մրցութային փաթեթի սխալ կամ ոչ ամբողջական ներբեռնման, ինչպես նաև հետագայում հրավերի փոփոխությունների առկայության դեպքում դրանց բացթողնման համար:

5. **Հայտերը պետք է ներկայացվեն միայն էլեկտրոնային եղանակով**՝ էլեկտրոնային գնումների **«ARMEPS»** (www.armeps.am կայքի) համակարգի միջոցով ոչ ուշ քան **2021թ-ի մարտի 30-ին, ժամը 15:00-ին**: Ընդ որում, հայտը կազմող փաստաթղթերը պետք է լինեն կնքված, ստորագրված և բնօրինակից սկանավորված կամ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում էլ.գնումների համակարգի կողմից:
6. Բոլոր Հայտերը պետք է ուղեկցվեն **«Հայտի ապահովման հայտարարագրով»:**
7. Պատվիրատուի հասցեն ներկայացված է ստորև՝

**ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ**
**Երվանդ Էլիբեկյան, Տնօրեն**
Կոմիտասի 49/4, ք. Երևան 0051, ՀՀ (5-րդ հարկ)
Հեռ.՝ (+374 10) 29 75 36, (+374 10) 29 75 37
Էլ. հասցե՝ info@healthpiu.am, kristine.ghambaryan@healthpiu.am
Վեբկայք՝ www.healthpiu.am